

ՀՀ տարածքային կառավարման նախարարության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի գնման մրցույթի հայտարարություն /հրապարակվել է 22.03.2013թ.

«ՀՀ-ՏԿՆ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով մրցույթի շրջանակներում ՀՀ տարածքային կառավարման նախարարության 2013 թվականի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով մրցույթի շրջանակներում կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 2 հասցեով, N 505 սենյակ, մինչև 2013թ. ապրիլի 3-ը, ժամը 11:00-ն:

Հայտերը կբացվեն Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 2 հասցեում, N 505 սենյակում, 2013թ. ապրիլի 3-ին, ժամը 11:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Գնման նախնական պայմանագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ, գնային առաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր
ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ
N ՀՀ ՏԿՆ-ՇՀԱՊՁԲ-11/3----

ք. Երևան

«-----» ----- 2013թ.

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Կ. Իսախանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և -----ն, ի դեմս Ընկերության տնօրեն -----ի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը.

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները.

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը.

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով.

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ----- (-----) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը, սահմանված է սույն Պայմանագրի N 2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2013թ-ի դեկտեմբերի 25-ը:

9.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.3 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ

գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.5 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.6 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.7 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՀՀ տարածքային կառավարման
նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հր.
Կառավարական տուն 2
ՀՎՀՀ 02578338
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011003150
Հ/Հ 900011003168

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«-----» ---Ը
Հասցե -----
«-----բանկ» --Ը
Հ/Հ -----
ՀՎՀՀ -----

(ստորագրություն)
Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժին	Ապրանքի անվանումը	Չափի միավորը	Տեխնիկական բնութագիրը
1.	Սոսինձ	հատ	Չոր սոսինձ գրասենյակային (սոսնձամատիտ) 35 գր. զանգվածով, պլաստմասսայե տարայով, թուղթ սոսնձելու համար
2.	Բաղադրանյութ (շորիխ)	հատ	Բաղադրանյութ տպագրված տեքստը մաքրելու համար ջրային հիմքով կամ այլ օրգանական լուծիչով, մինչև 20°C չսառչող, վրձինով, 20 մլ տարողությամբ սրվակներ
3.	Պոլիմերային ինքնակաշուն ժապավեն 1	հատ	48 մմ լայնությամբ, թափանցիկ
4.	Պոլիմերային ինքնակաշուն ժապավեն 2	հատ	18 մմ լայնությամբ, թափանցիկ
5.	Թղթապանակ (ֆայլ) 1	հատ	Թափանցիկ պոլիէթիլենային թաղանթից, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար, 40 միկրոն, ամուր եզրերով, հարթ մակերեսով, փայլուն, առավել տարողունակ
6.	Թղթապանակ (արագակար) 2	հատ	Սովաբաթղթից, արագակարով
7.	Թղթապանակ 3	հատ	Ռեգիստրատոր, լայնությունը 8 սմ, A4 ֆորմատի
8.	Ռետին	հատ	Ռետին 40 մմ, նախատեսված մատիտով գրվածքները մաքրելու համար
9.	Ա4 ֆորմատի թուղթ	կգ	Թուղթ գրելու A4 (210x297) մմ ձևաչափի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: N 1, A դասի (կամ N 1, B դասի) սոսնձվածքը 1,25 մմ-ից ոչ պակաս, 1 մ ² մակերեսով թղթի զանգվածը՝ 80-ից մինչև 100 գ, սպիտակությունը՝ 90 %-ից ոչ պակաս: Փաթեթավորված կամ տուփերով՝ յուրաքանչյուրում 500 թերթ:
10.	Ծրար 1	հատ	A4 ֆորմատի, սպիտակ և դեղին, թղթե, խտությունը ոչ պակաս 120 գր/մ ² , փոստային ծրարներ՝ ուղիղ կամ անկյունային կափույրով,

			ինքնաստանձվող
11.	Ծրար 2	հատ	115x225 մմ չափի, սպիտակ թղթե, խտությունը ոչ պակաս 100 գր/մ ² , փոստային ծրարներ՝ ուղիղ կամ անկյունային կափույրով, ինքնաստանձվող
12.	Նոթատետր 1	հատ	Նոթատետր A4 (210 մմ) ձևաչափի, 50 թերթ
13.	Նոթատետր 2	հատ	Նոթատետր A5 (148 մմ) ձևաչափի, 50 թերթ
14.	Օրատետր 1	հատ	Օրատետր գրասենյակային, կաշվե կազմով, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն 2014թվականի համար
15.	Օրատետր 2	հատ	Օրատետր գրասենյակային, A4 ձևաչափի կաշվե կազմով, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն 2014 թվականի համար
16.	Նշումների թուղթ 1	հատ	Կաշուն թուղթ նշումների համար (50.8x76.2) մմ, դեղին, 100 թերթ
17.	Նշումների թուղթ 2	հատ	Կաշուն թուղթ նշումների համար (76,2x76,2) մմ չափերի, 4 գույն, 200 թերթ
18.	Նշումների թուղթ 3	հատ	Կաշուն թուղթ նշումների համար (76,2x127) մմ չափերի, դեղին
19.	Օրացույց	հատ	Սեղանի՝ նախատեսված տակդիրի համար, նշումների համար, թերթովի, հայերեն, 2014 թվականի
20.	Կոճգամ	տուփ	Մետաղյա, գունավոր գլխիկներով, տուփի մեջ 50 հատ
21.	Կարիչ (ստեպլեր) 1	հատ	Նախատեսված 20 էջ կարելու համար
22.	Կարիչ (ստեպլեր) 2	հատ	Նախատեսված 60 էջ կարելու համար
23.	Կարիչի մետաղալարե կապեր 1	հատ	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր, տուփի մեջ 1000 հատ, N 26 կարիչներին համապատասխան
24.	Կարիչի մետաղալարե կապեր 2	հատ	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր, տուփի մեջ 1000 հատ, N 10 կարիչներին համապատասխան
25.	Ամրակ	տուփ	33 մմ վինիլային ծածկույթով՝ տուփի մեջ 100 հատ
26.	Հաշվասարք (կալկուլյատոր)	հատ	12 նիշանի սեղանի հաշվասարք, արտաքին սնուցման 2 աղբյուր, ԳՕՍՍ 23468-85 կամ <Flamingo CD 2372 > դասի կամ համարժեք
27.	Քանոն	հատ	Գծաբաժանումներով, 30 սմ երկարությամբ, պլաստմասե
28.	Գրիչ	հատ	Գնդիկավոր 0.5 մմ ծայրով, սև, կապույտ, կարմիր միջուկներով, բարձր որակի
29.	Գրիչ (գել)	հատ	Սև, կապույտ գույների գելային միջուկով, 0.5 մմ ծայրով, Zebra BE-aDX5 կամ համարժեք

30.	Գծանիշ (մարկեր)	հատ	Առնվազն 6 գույնի, նախատեսված թղթի համար, ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրով, բարձր որակի
31.	Մատիտ	հատ	Հասարակ սև գրիֆեշներով կարծր պատյանով՝ Նոկի Գրաֆ հայ գրադե N 2, ՀԲ (Noki Graf high grade N 2, HB) 7 կամ համարժեք, անվանական տրամագծերը՝ 0,7 սմ, ռետինով
32.	Բացիկ	հատ	Շնորհավորական բացիկներ
33.	Բացիկ (ծրարով)	հատ	Շնորհավորական բացիկներ ծրարով

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ տարածքային կառավարման
նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հր.
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011003150
Հ/Հ 900011003168
ՀՎՀՀ 02578338

ՎԱՃԱՌՈՂ

«-----» ---Ը
Հասցե -----
«-----բանկ» --Ը
Հ/Հ -----
ՀՎՀՀ -----

Աշխատակազմի ղեկավար

Տնօրեն

----- Կ. Իսախանյան
(ստորագրություն)
Կ.Տ

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2

«-----» «-----» 2013թ.կնքված
 № ՀՀ ՏԿՆ ՇՀԱՊՁԲ-11/3--- գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժիններ	Գնման ենթակա ապրանքների			Նախատեսվում է գնել 2013թ. ընդ որում				Ընդամենը՝
				1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	
	Անվանումը	Չափի միավորը	Միավորի գինը	Միսնակը	Միսնակը	Միսնակը	Միսնակը	Միսնակը
1	Սոսիճ	հատ			65	65	70	200
2	Բաղադրանյութ (շտրիխ)	հատ			30	35	35	100
3	Պոլիմերային ինքնակաշուն ժապավեն 1	հատ			3	3	4	10
4	Պոլիմերային ինքնակաշուն ժապավեն 2	հատ			15	15	20	50
5	Թղթապանակ (ֆայլ) 1	հատ			1500	1600	1690	4790
6	Թղթապանակ (արագակար) 2	հատ			220	230	250	700
7	Թղթապանակ 3	հատ			15	15	20	50
8	Ռետին	հատ			30	35	35	100
9	Ա4 ֆորմատի թուղթ	կգ			425	425	430	1280
10	Ծրար 1	հատ			330	330	340	1000
11	Ծրար 2	հատ			1000	1000	1000	3000
12	Նոթատետր 1	հատ			40	45	45	130
13	Նոթատետր 2	հատ			20	20	20	60
14	Օրատետր 1	հատ			12	12	12	36
15	Օրատետր 2	հատ			3	3	3	9
16	Նշումների թուղթ 1	հատ			13	13	14	40
17	Նշումների թուղթ 2	հատ			75	75	80	230
18	Նշումների թուղթ 3	հատ			30	30	30	90
19	Օրացույց	հատ			20	20	24	64
20	Կոճգամ	տուփ			3	3	4	10
21	Կարիչ (ստեպլեր) 1	հատ			3	3	4	10
22	Կարիչ (ստեպլեր) 2	հատ			10	10	10	30
23	Կարիչի մետաղալարե կապեր 1	հատ			65	65	70	200

24	Կարիչի մետաղալարե կապեր 2	հատ			165	165	170	500
25	Ամրակ	տուփ			50	50	50	150
26	Հաշվասարք (կալկուլյատոր)	հատ			3	3	4	10
27	Քանոն	հատ			23	23	24	70
28	Գրիչ	հատ			130	135	135	400
29	Գրիչ (գել)	հատ			70	75	75	220
30	Գծանիշ (մարկեր)	հատ			65	65	70	200
31	Մատիտ	հատ			50	50	50	150
32	Բացիկ	հատ			130	135	135	400
33	Բացիկ (ծրարով)	հատ			100	100	100	300
Ընդամենը՝								

* Կախված ներկայացված գներից՝ քանակները կարող են փոփոխվել:

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
 ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական տուն 2
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011003150
 Հ/Հ 900011003150
 ՀՎՀՀ 02578338

ՎԱՃԱՌՈՂ

«-----» ---Ը
 Հասցե -----
 «-----բանկ» --Ը
 Հ/Հ -----
 ՀՎՀՀ -----

Աշխատակազմի ղեկավար

Տնօրեն

----- Կ. Իսախանյան
 (ստորագրություն)
 Կ.Տ

 (ստորագրություն)
 Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

h/h	Գնման ենթակա ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2013թ.-ի պետական բյուջեից, ընդ որում՝				
		1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
1.	Գրենական պիտույքների եվ գրասենյակային նյութեր		30%	65%	100%	100%
	Ընդամենը		30%	65%	100%	100%

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
 ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական տուն 2
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011003150
 Հ/Հ 900011003168
 ՀՎՀՀ 02578338

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«-----» ---Ը
 Հասցե -----
 «-----բանկ» --Ը
 Հ/Հ -----
 ՀՎՀՀ -----

Աշխատակազմի ղեկավար

----- Կ. Իսախանյան
 (ստորագրություն)
 Կ.Տ

Տնօրեն

 (ստորագրություն)
 Կ.Տ

Հավելված 4

«-----» «-----» 2013թ.կնքված
 № ՀՀ ՏԿՆ ՇՀԱՊՁԲ-11/3--- գնման պայմանագրի

ԳՆՈՐԴ

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
 ք. Երևան, Հանրապետության հր.
 Կռավարական տուն 2
 ՀՎՀՀ 02578338
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011003150
 Հ/Հ 900011003168

ՎԱՃԱՌՈՂ

«-----» --Ը
 Հասցե -----
 «-----բանկ» --Ը
 Հ/Հ -----
 ՀՎՀՀ -----

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ____

ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

«-----» ----- 2013թ.

Պայմանագրի անվանումը՝ Գրենական պիտույքների եվ գրասենյակային նյութեր պայմանագիր
 Պայմանագրի կնքման ամսաթիվը «-----» «-----» 2013թ.
 Պայմանագրի համարը՝ № ՀՀ ՏԿՆ ՇՀԱՊՁԲ-11/3---

Գնորդը, ի դեմս տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի ղեկավար Կ. Իսախանյանի և Վաճառողը՝ ի դեմս «-----» --Ը-ի տնօրեն -----ի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «-----» ----- 2013թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N__ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարումներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «-----» ----- 2013թ.-ից «-----» ----- 2013թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները.

Մատակարարման համառոտ նկարագիրը	Մատակարարման քանակական ցուցանիշները	Մատակարարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Գրենական պիտույքների եվ գրասենյակային նյութեր				
Ընդամենը	-----	-----		-----

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

Ապրանքն ընդունեց

_____ (ստորագրություն)

_____ (ստորագրություն)

ազգանուն _____

ազգանուն _____

Կ. Տ

Կ. Տ